


Մ. ՄԱՍԻՍԿՈՆՅԱՆ

ՏԻԶԵՐԸ

ՅԵՂ

ԸՆՏԱՆԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԴՈՂԵՐՈՑԲԸ

(ՊԻՐՈՊԼԱՋՄՈԶ)





619; 616.96




ՏԻԶԵՐԸ

Ե Ե Վ.

ԸՆՑԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ԴՈՂԵՐՈՅԲԸ

(ՊԵՐՈՊԱԶՄՈՋ)

652h
A 4259
49161



Պատ. խմբագիր՝ Խ. Ուսանյան

Պատնագիր. խմբագիր՝ Ռ. Արմենյան

Տեխ. խմբագիր՝ Ո. Հակոբյան

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնվել է արտագրույթյան 1934 թ. մարտի 23-ին.

Մտորագրվել է տպագրելու 1934 թ. մարտի 29-ին.

Դրսվելու № 230 Տիրաժ 3000 Պատվիր № 237

ԱՌԱՋԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կուսակցութեան 17-րդ համագումարում ընկ. ՍՏԱԼԻՆԸ՝ նշելու վզյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ուղղութեամբ ձեռք բերված խաշոր նվաճումները և անդրադառնալով անասնաբուծութեան խնդրին, շնչտեց, վոր՝

«Անասունների քանակի ասպարիզում հաշվետու ժամանակաշրջանում մենք ունենք վոչ թե վերելք, այլ դեռևս շարունակվող անկում՝ նախապատերազմյան մեկարդակի համեմատութեամբ»:

Խորհրդային Հայաստանում ևս մենք ունենք անասունների քանակի անկում, վորի սպառնալից վիճակի մասին խոսեց ընկ. ԽԱՆՁՅԱՆԸ՝ Հայկոմկուսի (Բ) 9-րդ համագումարում:

Կուսակցութեան պողպատյա առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ խնդիր դրեց, վոր 1934 թիվը անասնաբուծութեան զարգացման տեսակետից պետք է դառնա բեկման տարի, իսկ դրա համար «Անասնաբուծութեան գործնական» ձեռք: պետք է վերցնեն ամբողջ կուսակցութիւնը և մեր բոլոր կուսակցական ու անկուսակցական աշխատողները» (ՍՏԱԼԻՆ):

Առաջնորդի այս ցուցումներն աշխատանքի մար-

տական ծրագիրը և ուղեցույց են հանդիսանում անասնաբուծության զարգացման գործի կազմակերպման համար:

Անասնաբուծության զարգացման խոչնդոտներից մեկն էլ հանդիսանում է ընտանի կենդանիների ախրոպլազմոզ — անասունների մալարիա (դողերոցք)՝ վարակիչ հիվանդությունը, վորը տեղական բնույթ է կրում և ամեն տարի պալի թվով անասուններ է զոհ տանում:

Մինչև այժմ մեր կոլտնտեսական մասսաներն ու աշխատավոր գյուղացիությունը ծանոթ չեն այս հիվանդության ելությանը և նրա դեմ պայքարի կոնկրետ միջոցներին: Ընկ. Մ. Մամիկոնյանի այս գրքույկը հանրամատչելի ձևով բացատրում է այդ հիվանդության ելությունը, նրա տարածման պատճառները և նրա դեմ պայքարի կոնկրետ միջոցառումները:

Մեր կոլտնտեսական ու աշխատավոր գյուղացիական մասսաները՝ կարդալով ընկ. Մ. Մամիկոնյանի այս գրքույկը, կզինվեն անասնաբուծական այս անհրաժեշտ գիտելիքով, իսկ այդ մեծ չափով կնպաստի մեր սոցիալիստական անասնաբուծության զարգացմանը:

ԳՅՈՒՂԱՐՄՏ

Բնօժանի կենդանիների դադեոցքը (պիրուպլագմոզ)


Ինչպես հայտնի չե, մարդիկ վարակվում են դոգերոցքով (տենդով)՝ մոծակների միջոցով: Կենդանիների դոգերոցքն առաջ և զալիս վուշ թե մոծակների, այլ մեղ բոլորիս հայտնի տիգերի (գյանասների) միջոցով:

Տիգերն ապրում են ամեն տեղ, թե դաշտավայրերում և թե լեռներում: Տարվա նպաստավոր ամիսներին (վաղ գարնանից մինչև աշնան վերջը) նրանք բարձրանալով կենդանիների վրա՝ սնվում են նրանց արյունով, իբրև պարագիտներ, այսինքն՝ ապրում են կենդանիների հաշվին:

Դոգերոցքն ուրեմն արյան հիվանդությունն է և դանադան վայրերում նրան տալիս են տարբեր անուններ, որինսկ՝ «տենդ», «չխիր», «կղզրմա» և այլն: Դոգերոցքով հիվանդանում են համարյա թե բոլոր ընտանի կենդանիները, — խոշոր ու մանր յեղջերավոր անասունները, ձին, եղջ, շունը և այլն: Այդ հիվանդությունից ազատ չեն և վայրի կենդանիները: Յուրաքանչյուր տեսակի կենդանի ունի իր առանձնահատուկ դոգերոցքի տեսակները: Հիվանդությունն անմիջապես մի կենդանուց մյուսին չի անցնում: Վարակումը և

Նրա տարածումն առաջ են բերում միմիայն տիզերը, յի՛րը վոր նրանք բարձրանում են կենդանու վրա և ծծում նրա արյունը: Հիվանդացած կաթնատու կենդանիները պակսեցնում են սված կաթի քանակը, մյուսները՝ նիհարում, իսկ մատղաշներն ել դանդաղ մեծանում ու զարգանում:

Առաջներում կարծում էին, վոր նման հիվանդություններն առաջ են գալիս թունավոր խոտեր ուտելուց և վատ ջուր խմելուց, բայց ներկայումս պարզված է, վոր այդ հիվանդությունների պատճառը միմիայն տիզերն են: Յեթե այդպիսի հիվանդ կենդանու արյունը քննենք մանրադիտակի (միկրոսկոպի) միջոցով, նրա արյան կարմիր գնդիկների մեջ կանանենք տանձաձև պիրոպլազմներ (միաբջջիկներ): Հիվանդի արյան գույնը մուգ կարմրագույնից փոխվում է բաց



Նկ. 1. ա) առողջ կենդանու արյունը բ) պիրոպլազմոզով հիվանդ կենդանու արյունը

կարմրագույնի, ջրիկանում ու գծվար է լերդանում:

Այդ պիրոպլազմները սնվում են կենդանու արյունով, թունավորում են նրան, առաջ են բերում ար-

յան պակասութիւնն, գեղնութիւնն և այլն: Յեթն հի-
վանդի տիգերի արյունը սրակվի նման առողջ կենդա-
նու, կարող է վերջինս հիվանդանալ: Նույնպիսի գեղե-
րոցքով:

Տիգերի հասցրած մեծ անսոնապահությա-
նը տալիս և խոշոր կորուստներ:


Յերկրագնդի հարաւային տաք շրջաններում նը-
րանք ավելի շատ են տարածված և քաղմատեաաւ են,
քան հյուսիսային շրջաններում: այդ իսկ պատճառով,
պարզ է, վոր անասունների պիտաւլադմները Հայաս-
տանում ավելի շատ են և ավելի վտանգավոր, քան
հյուսիսային յերկրներում:

Հայտնի յե, վոր բնութիւյան մեջ յուրաքանչյուր
միջատ բաղմանում և տարվա վորոշ ժամանակաշրջա-
նում, նույնը վերաբերում և նայել տիգերին: Այսպեզ
խոսքը վերաբերում է առանձնապէս այն աղծերին,
վորոնք ապրում են զաշտերում, արտադայրերում:
Այդ տիգերի տարածման գործում պակաս դեր չի խա-
ղում նայել վոչխարաբուծական տնտեսութիւնների
քոչվորական կյանքը:

Տիգերի մի ուրիշ տեսակն ապրում է բնակարան-
ներում, գոմերում, հաւանոցներում: սրանք կոչվում
են բնակարանային տիգեր:

Դաշտային տիգերը վաղ պարնանից բարձրանում
են դաշտերում արածող ու ապրող կենդանիների վրա
յեւ սնվում նրանց արյունով: Նրանց կարելի յե գրա-
նել ձիու, յեզան, եշի, գոմշի, ուղտի, վոչխարի, այծի,
շան, խոզի, հաւերի, մողեսի, կրիայի, մկների և այլ
կենդանիների վրա, նույնիսկ մարգու վրա: Տիգերի
պարնան գարգացման այդ շրջանը պիտք է համարել

նրանց կյանքի ամենակարևոր շրջաններից մեկը: Կենսաբանական մարմնին կաշեկու համար, տիզը փնտռում է այնպիսի հարմար տեղ, վորտեղից կենդանուն դժվար է լինում նրան պոկել, քորելու միջոցով: Կապած դրու-թյան մեջ նրանք միում են 5-6 որ և ծածծ արյան պատճառով՝ խոշորանում՝ ուռչում, վորից հետո միայն վայր են ընկնում: Արու տիզն ավելի փոքր է լինում, քան



Նկ. № 2. Արու և եգ տիզեր

եղը և նրա չափը չի ուռչում արյունով: Եգ տիզը՝ պատրաստվելով գետնի վրա մի հարմար տեղում, տծում է հազարավոր ձվիկներ, վորից հետո ինքը մեռնում և Նայած շրջապատի պայմաններին, տարվա յեղանակին, ջերմության տատանանին, յերկու յերեք շաբաթից հետո ձվիկներից սկսում են դուրս գալ մանր թրթուռներ:

Մրանք կաշեկու մի վորևե կենդանու՝ անվում են նրա արյունով, կերպարանափոխվում և դառնում հարսնուկ (նիմֆա). վերջինս իր հերթին նույնպես կերպարանափոխվում և դառնում է հասունացած տիզ: Ուրիշ խոսքով, ինչպես շերամի ձվիկներից նախ դար-

զանում և թրթուռը, հարսնուկը և հետո թրթեռը, նույն ձևով եւ տեղի յե ունենում տիգերի զարգացումը: Տարբերությունն այն է, վոր փոխանակ թրթեռնիկի՝ այստեղ առաջ են գալիս տիգերի Հասունացած տիգն ունի գլուխ, մարմին, փորիկ և չորս զույգ վոստ Դրսից մարմինը պատած և թաղանթով, վորը կոչվում խտախտ: Արու անգերի ամբողջ մեջքը, իսկ եղերի՝ մեջքի առաջի մասը՝ բերանի կնճիթի ուղղությամբ, պատած և ամուր և փայլուն վահանով: Մարմնի առաջի մասում, մեջքի վահանի կողքերում գտնվում են աչքեր. տիգի մի քանի տեսակներն աչքեր եւ չունեն: Տիգերն իբրեւ պարադիսներ, այսինքն՝ ուրիշի հաշվին ապրողներ, շատ լավ զարգացած կնճիթ ունեն. այս վերջինը ծածկված և կեռիկներով (չանգալներով), վորի միջոցով տիգն ամուր կաշու և կենդանու մարմնին և դժվար և լինում նրան լողելը: Չորրորդ զույգ վոստերի հետևում, մարմնի կողքերին, գտնվում են շնչառության դորձաբանները. վորի վրա՝ առաջի մասում բերանի մոտ գտնվում և սեռական դորձաբանը, իսկ հետեվի մասում՝ անդի ցած գտնվում և հետույքը:

Սուրաքանչյուր վարակիչ հիվանդություն վարակումից անմիջապես հետո յիբևան չի գալիս՝ չի հայտարարվում, բայց նա միաժամանակ զարգանում և կենդանու որդանիդմի մեջ ծածուկ կերպով, վորից հետո միայն նկատելի յին դառնում հիվանդության առաջին նշանները: Այդ ժամանակաշրջանը, վորը տարրեր և տարրեր հիվանդությունների համար, անվանվում և դադանի շրջան (ինկուբացիոն շրջան):

Պիրուպլազմոզի դադանի շրջանը տևում է 8—12 օր, յերբեմն եւ 15—20 օր, վորից հետո նկատվում են

հիվանդության նշանները: Ուրեմն պետք է նկատի ունենալ, վոր կենդանին կարող է հիվանդացած լինել, քայքայ նրա վրա տիգեր չլինեն. դա ցույց է տալիս, վոր տիգերն արդեն վարակել են և վայր են ընկել:

Մեր ընտանի կենդանիներից ավելի հոճախ դողերոցքով հիվանդանում են խոշոր ու մանր յեղջերավոր անասունները և ձիերը: Հիվանդը դառնում է դանդաղկոտ՝ տխուր, շատ շուտ հոգնում է իր սովորական աշխատանքի ժամանակ, աստիճանաբար դադարում է ուտելուց և վորոճալուց, բարձրանում է տաքությունը մինչև 41 աստիճան և ավելի: Անասունը խիստ նհարում է, շնչառությունը և յերակի զարկն արագանում են: Յերբեմն ել շնչառությունը ծանրանում է. հաճախ սկզբում փորը լուծում է, հետո կապնվում: Կիզկզանքը ծածկված է լինում լորձով և յերբեմն է երգացած արյան ըծերով: Անասունը հաճախակի պառկում է ու տնքում: Կովերը դադարում են կաթ տալուց, յերբեմն ել հորթատում են: Աչքի, բերանի, լնդերի և քթի թաղանթները գունատվում են և դեղնում: Յերբեմն ել կենդանին արյուն է միզում: Հիվանդի այդ դրությունը տևում է 5—10 օր: Հիվանդությունը վերջնականապես պարզելու համար, անհրաժեշտ է արյունը քննել մանրադիտակի միջոցով, վորպեսզի ստույգ կերպով կարելի լինի հայտնաբերել հիվանդություն առաջ բերող պիրոպլազմը: Դրա համար արյունն ընդհանրապես վերցնում են ականջից:

Հիվանդ կենդանու դրությունն ավելի յե վատթարանում, յերբ նա շարունակում է աշխատել: Մեր և լշար, ինչպես նայեմ ազնվացեղ կենդանիները շատ անգամ չեն դիմանում հիվանդության և հաճախ սատկում են դողերոցքից:

Հիմնադրությունից նոր առողջացած, բայց դոն
չկապողութեամբ կենդանուն աշխատեցնելը խիստ ան-
դրադառնում է նրա առողջության վրա. այդ դեպքում
հիմնադրությունը հաճախ կրկնվում է և շատ անգամ
կենդանին սատկում է:

Յերբ նկատվում է, վոր կենդանին իրեն լավ չի
դգում, պետք է անմիջապես նրան մեկուսացնել ա-
ռողջ կենդանիներից: Չպետք է կարծել, վոր հիմնա-
դին պետք է բուժել միայն դեղորայքով, այլ անհրա-
ժեշտ է ուրիշ միջոցներ ևս դորձադրել, վորոնք կարող
են ալելի կարեոր դեր խաղալ կենդանու առողջացման
գործում: Այդ միջոցները հետևյալներն են.

Հիմնադ կենդանիների գոմը պետք է լինի մա-
քուր, չոր, առանց միջանցիկ քամիների և հով: Հի-
մնադին պետք է տալ թեթև կեր, մաքուր ջուր, վոր-
քան հիմնադը ցանկանա: Պետք է խուսափել հատի-
կավոր կերից և հացից:

Այս հիմնադության բուժումը բավական բարդ է
և դժվարին: Այս դեպքում շատ բան է կախված հի-
մնադին խնամողից: Հիմնադի դրությունը մեղմացնելու
համար՝ պետք է նրան տղատեղ աշխատանքից, հավա-
քել նրա վրայից տիգերը և վոչնչացնել, հով յեղանա-
կին դուրս բերել մաքուր ողի մեջ, պաշտպանել ցըր-
տից, խոնավությունից և արևի ճառագայթների անմի-
ջական տղեցությունից:

Տաքությունն իջեցնելու յիմ մարսողության գոր-
ծարանները մաքրելու համար, ցանկալի յե անել սա-
ռը կլիզմա: Այդ նպատակի համար պետք է վերցնել
ոտվորական ջուր՝ 3—4 լիտր, սենյակի կամ արևի տակ
յեղած ջերմաստիճանով, ոեդինի խողովակ՝ մի մա-

մի հաստությամբ, 1 1¹/₂ մետր լերկարությամբ և
ձազար: Ռեզինե խողովակի մի ծայրն անց կացնել
ձազարին, իսկ մյուս ծայրը՝ կենդանու հետույքը— ու-
ղիդ աղիքը, ապա ջուրը լցնել ձազարի մեջ: Այս գոր-
ծողությունը ցանկալի չե կատարել որովա մեջ մի քա-
նի անգամ:

Ինչ վերաբերում է հատուկ բուժման, դրա հա-
մար պետք է դիմել անասնաբուժին կամ բուժա-
կին: Նախ քան նրանց դալը, պետք է գործադրել հե-
տևյալ դեղորայքը. կամֆորի յուղ՝ 3—4 գրամ, որական
3 անգամ. դլաուրերյան աղ (լուծողական)՝ 400—500
գրամ. հիվանդ վոչխարներին և այծերին տրվում է
կամֆորի յուղ՝ 0,5 գրամ, որական յերեք անգամ,
դլաուրերյան աղ՝ 50—60 գրամ:

Բացի բուժումից, պիրոպլազմոզի դեմ պայքարե-
լու գործում հիմնական դեր են կատարում ընդհանուր
նախազգուշական ձեռնարկումները:

Յեթե տեղերում կան տիզերով վարակված արո-
տավայրեր, այդ դեպքում, անասնաբուժի ցուցմուն-
քով պետք է կազմակերպել նրա մաս-մաս ողտազոր-
ծումը: Նախորոք պետք է լավ ուսումնասիրված լինեն
տեղի պայմանները յեվ տիզերի կենցաղը:

Վերևում տալիքնք, վոր բացի ընտանի կենդա-
նիներից, տիզերի տարածման գործում պակաս դեր
չեն խաղում նաև քոչվորները, վայրի կենդանիները
յեվ թռչունները: Այս հանգամանքը պետք է նկատի
առնել պայքարի ընթացքում:

Վորոշված արոտավայրը բաժանում են 4—5 մա-
սի՝ այն հաշվով, վոր յուրաքանչյուր հողամաս ողտա-
զործվի անասունների կողմից 10 ամսից հետո. այ-

ախնջն՝ յեթե անոյսւ տարի հողամասն ոգտադործվել
ե հուլիսին, այս տարի նա պետք ե ոգտադործվի մա-
յիսինս Այս ձևի պայքարի նպատակն ե՝ վոչնչացնել
տիղերին քաղցի միջոցով:

Կենդանիների տեղափոխութիւններն իրենց մշտա-
կան միջավայրից դեպի ամառվա արոտները—յայլադ-
ները ե վերադարձը տուն, պետք ե կազմակերպել այն-
պես, զոր նրանք իրենց հետ, իրենց կաշվի վրա
չտեղափոխեն տիղեր: Կենդանիները ճանապարհելուց
առաջ, ուշի-ուշով պետք ե ստուգել, թե արդյոք
նրանց վրա չկան տիղեր: Յեթե կան, պետք ե խնամքով
մաքրել մինչև վերջին տիգը—թե խոշորները, թե
փոքրերը նրանց հեշտ ե պոկելը, յեթե կենդանուն
պոռկեցնենք մեջքի սրա: Տիղերը շատ են սիրում
կաշիւ կենդանու աղբերին, վզին ե մարմնի այլ մա-
սերին: Հովաքած տիղերին պետք ե անպայման
վոչնչացնել:


Մեր այն դաշտավայրերում, զորտեղից պարե-
լարար անասուններին սար են քշում, տիղերի մաք-
րելը ցանկալի չե կատարել այն ժամանակ, յերբ այդ
վայրերում տիգերը նոր են սկսում զարթնել: Այդպես
եւ կատարել կենդանիների վերադարձին—յերբ բնու-
թյան մեջ եւ հանդես չեն գալիս տիղերը, աշնան ե
ձմրան անքարենպաստ յեղանակների պատճառով:

Ինտենսիվ կուլտուրաներով (բամբակ, ծխախոտ,
առվույտ ե այլն) պրազված հողամասերն ստեղծում են
տիղերի դարդացման համար աննպաստ պայմաններ:

Տիղերի վոչնչացման գործում մեծ դեր ե խա-
ղում անասուններին լողացնելը հատուկ ավազանում.
10 փար ջրի մեջ լուծում են—մկնդեղային նատր՝ 32
գրամ (50 % AS_2O_3), կանաչ սապոն՝ 14 գրամ, նավթ՝ 50

գրած, կամ թե միմիայն մկնդեղային լուծույթով: Այս հեղուկն սպանիչ կերպով և ազդում տիգերի վրա (10 լիտր ջրին 32 գրամ):

Պայքարի այս ձևը շարկապված և արոտավայրերի ռզտագործման սիստեմի հետ, վերը թե մեզ մոտ և թե ուրիշ երկրներում տվել և փայլուն արդյունք: Վերոջ գրական հետևանք և ստացվում, յերբ տիգերով



Նկ. № 3 Անասուններին լողացնելը.

ծածկված անասուններին քսում կամ նրանց մարմնի վրա սրսկում են վերահիշյալ ձևով պատրաստված հեղուկը:

Հակատիղային ավազանները ցանկալի յե կառու-
ցել ջրի մոտ, կարճը՝ ամուր հողամասերում և խու-
սափել ճահճային տեղերից:

Ավազանը պետք է ունենա տախտակե դռներից
ծածկոց, վորպեսզի ավազանի միջի լուծույթը պաշտ-
պանվի գոլորտիցս և անձրևներից:


Ավազանի լողարանային մասը կարելի յե պատ-
րաստել քարից, աղյուսից, յերկաթ-բետոնից, անպայ-
ման քանիով ներսի մակերևույթը ցեմենտի շաղախով
կամ ձյութած փայտե տախտակներից:

Հակատիղային ավազան պատրաստելիս պետք է
նկատի ունենալ հետևյալ չափերը:

Լայնությունը՝ մինչև լուծույթի մակերևույ-		
թը	1,4	մետր
Լայնությունը՝ հասակում	0,6	»
Խորությունը՝ մինչև լուծույթի մա-		
կերևույթը	1,85	»
Ավազանի պատերի բարձրությու-		
նը՝ լուծույթի մակերևույթից	0,5	»
Հատակի յերկարությունը (հորիզո-		
նական գծով)	7,0	»
Յեղքի յերկարությունը (հորիզոնա-		
կան հարթապատկերը)	6,0	»
Մուտքի յերկարությունը (45°-		
անկյունաչափ հորիզոնական հար-		
թապատկերով սայթաքման հրա-		
պարակը)	1,0	»
Յերկաթ-բետոն ավազանի պատի		
հաստությունը	0,2	»
Աղյուսի ավազանի պատի հաստու-		
թյունը	1	աղյուս
Փայտե ավազանի պատի հաստու-		
թյունը	5	սանտ.

Տիգերի դեմ պայքարելու ամենալավ միջոցներից
 և համարվում մկնդեղային աղից (նատրից) պատ-
 րաստված լուծույթը ջրի մեջ, իբ 16 0/0 անջուր (ան-
 հիդրիդ) մկնդեղային աղի քանակությամբ:

Վորոշ դեպքերում այս ստանդարտ լուծույթին ա-
 վելացնում են կանաչ սապոն, նավթ հետեյալ հարա-
 բերությամբ.




Նկ. № 6. Սրահիչ մեքինա—Տրեմաս.

Մկնդեղային աղ (50 0/0 պարունակութ.)	32	գր.
Կանաչ սապոն	14	գր.
Նավթ	50	»


Ավազանի արտադրողականությունն որվա մեջ փոփոխական է, նայած անասունների քանակին և յանձնակի գրության:

Ընդհանրապես, միջին թվով 200 գլխից բաղկացած նախրի լողացնելը խլում է մի ժամ ժամանակ, չհաշվելով նրանց դաշտից քչել բերելը և հետ տանելը: Այսինքն՝ կենդանին ավազանում անց է կացնում 20 վայրկյան, իսկ մի կենդանու վրա ծախսվում է միջին թվով 2,5—3 լիտր լուծույթ:




Նկ. № 5. Մրսկիչ մեքենա—Գոմոն.

Ուրեմն, յերբ ավազանով անցնում է 5000-8000 գլուխ անասուն, այնք է ավազանի միջի լուծույթը



փոխել, վերովհետև նա անպետքանում, կեղտոտվում և Տիգերի դեմ պայքարելու ձևերից մեկն է՝ տիզոտ անասուններին տրտաքինից սրսկել վերահիշյալ հակա-տիզային լուծույթով, մեզ բոլորիս հայտնի, այգեգործ-ծուծյան մեջ գործածվող սրսկիչ մեքենաներով, — «Պո-մոն», «Նեկոնոմ», «Ավտոմակս», «Տրեմաս» սխտեմնե-րի կամ սովորական ջրսրսկիչով (գիգրոպուլատով),




Նկ. 6 «Ավտոմակս»

Այս ձևի սրսկման համար անհրաժեշտ և պատ-քատել համապատասխան դադգյան՝ անասուններին մեջն առնելու համար կամ նրանց կապիլ այնպես, վոր անասունը չկարողանա շարժվել տեղից:

Յեթե անտեսությունը հնարավորությունն չի ու-նենում անասուններին լողացնել և սրսկել հակա-տիզային հեղուկով, յեկնելով տեղի ու նման այլ պայ-

մաններից, նա կարող է այդ լուծույթը քսել անասուն-
ներին:


Մեր բամբակացան շրջաններում, վորտեղ անա-
սունների դողերոցքն ավելի հաճախակի յե, իսկ մյուս
կողմից ել՝ աբստամպյրերի պակասությունն ե զգաց-
վում, ցանկալի յի կենդանիներին պահել բնակաբան-




Նկ. 8 Կենդանիների սրահումը.

ներում և դուրս չթողնել զաշտ արածելու: Այս դեպ-
քում պետք ե ել ավելի խիստ հետևել, վորպեսզի
թալմ խոտի, կանաչ ճյուղերի և ուրիշ կենդանիների
միջոցով տիդիք ներս չբերվին:

Այն անտեսությունները, վորոնք անհրաժեշտ են
զտնում պահել աղնվացեղ անասուններ, ցանկալի յե
ձեռք բերել նրանց մատղաշ հասակից, տարվա այն
յեղանակին, յերբ չեն զարթնում տիդիքը: Պետք ե ա-
սել, վոր մատղաշներն ավելի թեթև են անցկացնում
հիվանդությունները և հետադաշում ել չեն հիվանդա-
նում դողերոցքով:





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039154

6094
ԳԻՆԸ 30 4.

A $\frac{I}{4259}$



М. МАМИКОНЯН

Пироплазмоз

Сельхозгиз

1934